

ՄԱՍԻՍ

ԶՅԴ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

16 ՕԳՈՍՏՈՍ 1903

Շ Ա Ֆ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ա.գգային, Գրական, Փառափառական, Գիտական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԴԱՐՁ ԳՍՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՂ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

(Խմբագրական)

«Յաջողութեան համբան». Լճի կ'ըսէ Պ. Քառնեկի. ՄԷՐՍԷՏԷՍ : — Տեսութիւն մը բանաստեղծութեան վրայ (Ի. մաս) Ե. ՄԵՍԻԱՆՆԱՆ : — Լեոն Ժ. Պապին վերջին տաղը. Լասինե-րենէ զրաբարի բարգմ. ՏԻԼԷԹԱՆԹ : — Ուրուագիծներ — Վայրկենական. «Աղեֆա Փանոսեան». ԴԱՄԷՐ : — Ներշնչարան (Բանաստեղծութիւն) Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ : — Ամուսնաբող կիներ (Բարիգեան նորալեզ) բարգմ. ՏՕՄԻՆՍ : — Պատասխան մը. Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ — Խմբագրական նօթեր :

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի շաբեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քառսուն դրո. Եւրոպայի քաղաքներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի : Արժասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 Բուլլի : Թղթաստանական ծախքը Խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատուողութեան չեն առնուի :

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի :

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչի պայմաններով :

Ձեռն-Քէ կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیّه غلطه ده (ماسيس) غرضه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաբիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ա Յ Բ, Կ Ի Ն, Տ Ղ Ա Յ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը: Թէպէտեւ հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



Հիշեցու վայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

18

SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ և կը տեսնուի որ

Ը Ս Կ Օ Թ Ի Ի Ե Ղ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Ի ՈՒ Ն

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ ամենամեծ դեղ է: Արեգական տակ ասոր հաւասար բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Բոլոր բեղաժողովները և բեղաձաճութիւնները ինքն ինքն:

Ա Պ Ա Ռ Ի Կ Վ Ա Ճ Ա Ռ ՈՒ Մ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

Վ Ե Ր Ջ Ի Ն Գ Ի Ն



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ զընողներէն՝ 100ին 15 զեղչով:

Ա Մ Ր Ա Ն Ա Ռ Թ Ի Ի

Կըսեն թէ ամառը որ եւ է՝ սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քաւմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէլալ պէյ Խան, թիւ 10:

Մասնաճիւղեր թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին գլուխը լրագրաւաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐ ՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն. թատրոնները, նաեւ Պօստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառարիէռի, Օթէյ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառանոցները:

Թրանսաթյան թիւք, Հավր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, ֆրանսական թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր կազմական կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցէ.— Պօլիս, Մահմուտ փաշա, Պէօյիւք Երլարզ խաւ, թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Դրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւրի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առեւծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄ- ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԴԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԴԵՆՍԱՌՈՎ ՈՒՂԵՒՈ- ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵՂԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ- րուելուն դէմ:

Ընկերութեան դրամադուլը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Քրաւք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմրիւք խան, Բարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնա- կարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւեւ- լով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագ- րին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնե- լով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզու- ներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշա- կերտները կանուխէն ընտելանան Անգլիերէ- նի: Տնօրէնը Տօքթ. Չէյմպլըս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորա- պէս կը յարմարցնէ ընթացաւարտները գործ- նական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգա- մայն մօտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Գիտական ճիւղերու դասախօսութիւններն արդիւնաւորելու հա- մար՝ վարժարանը ունի պիտանի ու անհրա- ժեշտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը: Նորակառոյց նպատակայարմար շէնքը եւ նորաստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակե- աւելի նպաստաւոր են աշակերտներու հան- գըստութեան եւ առողջութեան, գեղը ըլ- լալով արդէն հանրածանօթ՝ իր մաքուր օ- դովն ու գեղեցիկ տեսարաններով:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տա- րեշջան) տեղի պիտի ունենայ Ապտեմբեր երեքին (Ն. Տ.): Տարեթոյակն է 16 օսմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպլը-Հասուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պար- տիզակ:

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՐժԱՐԱՆ ԻՍԿԻՒՏԱՐ

Ամերիկեան Վարժարանի յառաջիկայ տա- րեշջանը կը սկսի 1903 Սեպտ. 15ին (Ն. Տ.):

Գիշերօթիկներու տարեթոյակն է 35 օսմ. ոսկի Ուսումնարանին չորս դասընթացքնե- րուն համար, իսկ 30՝ նախակրթարանի հա- մար:

Տնօրէնութիւնը ջանք չէ խնայած վար- ժարանը ամէն առաւելութիւններով օժտելու: Լաւագոյն դրութիւնով եւ մեծ յաջողակու- թիւնով կ'ուսուցուին Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն եւ դասական լե- ճուները, ինչպէս նաեւ բնական գիտութիւն- ներ:

Հմուտ եւ վարժ հիւանդապահուհի մը աշակուրջ հսկողութիւնը կը վայելեն աշակեր- տուհիները եւ կ'ապրին խաղաղ ու բարե- կարգ մթնոլորտի մը մէջ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել վարժարանին Տնօրէնուհի Տր. Փէթրիքի:

ՄԱՍԻՆ

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 33

19 ՕԳՈՍՏՈՍ 1903



ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼ ՈՒԹԵԱՆ

Օ. Գ. ՈՍՏԱՓԱՌ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՅԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԻՈՅ

Օսմանեան ընդարձակածաւալ Կայսրութեան ամէն կողմը՝ անհուն բերկրութեամբ և ան-
նըկարագրելի հանդիսաւորութեամբ կը տօնուի այսօր, երեքշաբթի, ՕԳՈՍՏԱՓԱՌ
ԿԱՅՍԵՐ Գահակալութեան բարեբաւորիկ Տարեդարձը: Ն. Կ. Վեհափառութեան միլիոնաւոր
հաւատարիմ հպատակները, ինչպէս Մայրաքաղաքին մէջ՝ նոյնպէս գաւառները, կեդրոն
քաղաքներէն մինչև գիւղական անկիւնները, խրախճանութիւններ կը կաղմակերպեն, չքեղ
լուսավառութիւններ կը կատարեն և երախտագիտական ինքնաբոլոս արտայայտութիւն-
ներով կը մասնակցին Կայսերական Տօնին: Օտար երկիրներու մէջ հաստատուած Թուրքիա-
ցիներն ինչպէս նաև Թուրքիաքնակ օտարազգիները ո՛չ նուազ բերկրութեամբ ու վառութիւն-
առութեամբ կը նուիրեն իրենց չնորհապարտ մեծարանքի բաժինը, ցնծագին բարեմաղթու-
թիւններով:

Այն բոլոր առաւելութիւնները զորս Օսմանեան հոյակապ Կայսրութիւնը յարաճուն կեր-
պով ձեռք կը բերէ՝ զինուորական ու նաւային ոյժերուն աւելնալովը, երկրին ելմտական
ու տնտեսական վարկին բարձրացումովը, երկրագործական, ճարտարաբոլեւտական, կըր-
թական, բարեգործական հաստատութեանց բազմանալովը, և այլ բազմաթիւ հանրօգուտ
ձեռնակներով, ամէնքն ալ ուղղակի արդիւնքն են ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ հանճարեղ մըտ-
քին, հայրական հոգածութեան և բարեխնամ հովանիին:

Կայսերական Գահակալութեան բարեբաւորիկ տարեդարձը գեղեցիկ առիթ մըն է որ
Թուրքիոյ համայն ժողովուրդը հանդիսաւորապէս արտայայտէ այն երախտագիտական պատ-
կառու ղեացումը զոր կը տածէ միշտ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԵՀԱՊԵՏԻՆ նկատմամբ, միահամուռ
բարեմաղթութիւններով և ջերմագին չնորհաւորութիւններով: Տեղական լրագրութիւնը,
որ նոյնպէս երախտապարտ է Ն. Կ. Վեհափառութեան, իր վայելած բազմաթիւ չնորհնե-

բուն համար, բերկրութեամբ կը փութայ արծազանդ հանդիսանալ հանրային ցնծութեանց
և շնորհապարտ զգացմանց, և կը մաղթէ արեւշատութիւն ու յարատեւ բարեբաւտութիւն
Օսմանեան մեծադօր և լուսամիտ Ինքնակալին: Մասիս ևս, որ իր գոյութեան յիսուն և
բեք տարիներուն մեծադոյն ու բարգաւաճ մասը բոլորած է ու կը բոլորէ ընդ հովանեաւ
ՕԳՈՍՏՍՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԻՆ, Կոյսերական Գահակալութեան երջանկօրեք տարեդարձին
առթիւ ամէն կողմէ բարձրացող օրհներգութեանց և մաղթանաց ձայնակից՝ կը գոչէ

ՅԱՐԷՏ ԿԵՅՅԷ

ՎԵՋ. ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՅԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԻ ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼՆ ԹՈՒՐԿԻՈՅ

ԳՈՇԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

ՇՆՈՐՀԱԻՌՈՒԹԻՒՆ Ք.—ԼՈՒՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ Ք

Այս առաւօտ, Մայր եկեղեցւոյ մէջ, գոհաբանական հանդիսաւոր մաղթանքներ կը
կատարուին՝ Վեհ. Սուլթանին Գահակալութեան բարեբաւտիկ տարեդարձին առթիւ, նա-
խագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և մասնակցութեամբ եպիսկոպոսական դասուն, քա-
րողիչ վարդապետներու, աւագերէցներու և դպիրներու: Արարողութեանց ներկայ կը
գտնուին Կրֆն. և Քաղ. Ժողովոց անդամները, Տեսուչ Խորհուրդներու, Հոգաբարձու-
թեանց, Խնամակալութեանց, Թաղ. Խորհրդոց ներկայացուցիչներ, և ամէն դասակար-
գի ազգայինք: Արարողութեանց աւարտումէն ետքը, Ս. Պատրիարք Հայրը Կայս.
Պալատ կ'երթայ՝ յանուն Ազգին շնորհաւորական և երախտագիտական Ուղերձ մը մատու-
ցանելու յառա Կայս. Գահոյից:

—Գոհաբանական մաղթանքներ կը կատարուին նաեւ Հայ-Հռոմէականաց Բերայի Պատ-
րիարքանիստ եկեղեցւոյն մէջ՝ Կ.—Պատրիարք Տ. Պողոս Սրբազանի նախագահութեամբ,
և միւս բոլոր հասարակութեանց մայր տաճարներուն մէջ, հոգեւոր պետներուն նախագա-
հութեամբ, որոնք յետոյ Կայս. Պալատ կ'երթան շնորհաւորական և երախտագիտական
Ուղերձներ մատուցանելու:


—Բարձր. Մեծ-Եպարքոսն ու բոլոր նախարարները, քաղաքային, ղրնուորական և
կրօնային բարձրաստիճան պաշտօնատարները, դեսպանատանց Ա. Թարգմանները, սե-
ղանաւորական հաստատութեանց պետերը և այլ բազմաթիւ անձնաւորութիւնք այսօր
Կայս. Պալատ կ'երթան ի շնորհաւորութիւն: Եւրոպական վեհապետներէն, օտար եր-
կիրներու օամ. դեսպաններէն, նահանգաց կոսակալներէն, Եգիպտոսի Խաիվէն, Մէք-
քէի Էմիրէն շնորհաւորական հեռագիրներ կը հասնին՝ Ն. Կ. Վեհափառութեան Գահա-
կալութեան տարեդարձին առթիւ:

—Այսօր, առաւօտէն սկսեալ, տօնական երևույթ մը ստացած է Օսմանեան չքեղ ու-
տանը, և լուսավառութեանց մեծամեծ պատրաստութիւնք որոնք կը կատարուէին շարաթի-
նեք ի վեր, աւարտած են, գլխերուան առաջին ժամուն՝ անթիւ անհամար լոյսե-
րով ողողելու համար ամբողջ մայրաքաղաքը, թէ՛ ցամաքի և թէ՛ ծովու վրայ:

Ամենուրեք՝ հրախաղութիւնք, նուագածութիւնք և հանրային ցնծութեան արտա-
յայտութիւններ ի պատիւ Ն. Կ. Վեհափառութեան:

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

ԻՆՉ ԿՐՍԷ Պ. ՔԱՌՆԷԿԻ



Կեանքի մէջ յաջողելու խնդիրը մէկն է այն կենսական հարցերէն՝ որ գլխաւորաբար նորահաս սերունդներու ուշադրութեան կը ներկայացուի ուրիշ ամէն բանէ աւելի: Գըրեթէ մահու և կենաց խնդիր մըն է այդ յաջողութիւնը, ու բնականաբար իբր այդ մասնաւոր կարեւորութիւն մը կը տրուի անոր: Մեր մէջ, տղան առիթ չունենար դպրոցական գրասեղաններուն վրայէն ունկնդրելու այն տեսակ դասերու որոնք այդ յաջողութեան ճամբան պիտի կրնային ցոյց տալ. և ասիկա՝ սա բնական պատճառով որ դաս տալու կոչուած մարդիկը մեծ մասամբ այդ յաջողութեան ճամբան չգտնելնուն համար, վարժապետի պիտակ մը փակցուցած են իրենց անունին:

Բայց միեւնոյն բանը չէ դպրոցէն ելլելէն վերջ: Տղան չըջանաւարտ մըն է, և կէս մը պատրաստուած կը նկատուի կեանքի պայքարին: Խորհրդատուները իսկոյն կը չըջապատեն զայն տեսակ մը հանգիստաւոր լրջութեամբ՝ որուն պատկառաղբու հովը ամէն բան կը թուէ: Շատ տեսակ մարդիկ կան անոնց մէջ, հրապարակագիրներ, հոգաբարձուներ, եկեղեցականներ, թաղականներ, եայլն, որոնք ընդհանրապէս յաջողութեան ճամբուն վրայ այնչափ գաղափար ունին՝ որ չափ ես ու դուն Հրատի բնակիչներուն նըկատմամբ, և որոնք սակայն չեն ուզեր այդ կարգի հանգիստաւոր առիթներ փախցնել՝ իրենց խորհուրդներուն մեծութեան առջև տըղաքը խոնարհեցնելու համար:

Անոնք կ'ուզեն տղոց սորվեցնել յաջողութեան գաղտնիքը, դրամ գիտելու եղանակը, միլիոնատէր ըլլալու կերպը, և բոլոր այդ ծանրակշիւ խնդիրներուն նկատմամբ այնչափ խորհուրդներ, այնչափ մեթոտներ ունին՝ որ չափ թերեւս դրամ չկայ իրենց անտուկին մէջ: Կը բաւէ որ մեր ըսած կերպով շար-

ժիք, — կ'ըսեն աղոց, — և ձեր գործերը անխնայերու վրայ դրուածի պէս պիտի քալեն, ձեր բաղբը պիտի բացուի աղուոր արեւի մը պէս, և ձեր գիրքովն ու հարստութեամբ նախանձելի պիտի դառնաք:

Այս կարգի քարոզներ միշտ առիթ կ'ունենանք լսելու: Ամէնքն ալ իրարու կը նըմանին արդէն, և որչափ հանգիստաւորութեամբ արտասանուած ըլլան, այնչափ աւելի ծիծաղ կը շարժեն: Մարդ վերջապէս չի կըրնար լրջութիւնը պահել այն տեսակ անձերու հանդէպ՝ որոնք, չառաջարկութեան բծիչներու պէս, ազդու, լճուական դեղագիրներ տալու կը յաւակնին անա՛նկ հիւանդութեան մը համար ուրկէ իրենք վարակուած են անբուժելի կերպով: Ուրեմն մէկ կողմ թողունք այդ քարոզները և տեսնենք թէ ի՛նչ կ'ըսէ Պ. Էնտրիու Քառնէկի՝ յաջողութեան ճամբուն համար: Իր խորհուրդները կրնան հրապարակ ու շողոզոտ բաներ մը չըլլալ. բայց գոնէ ոչ ոք պիտի համարձակի տարակուսիլ անոնց հիմնաւորութեան նկատմամբ, որովհետեւ Պ. Քառնէկի մէկն է աշխարհի այն երջանիկ և առանձնաշնորհեալ արարածներէն՝ որոնք առանց վարանելու ու մանաւանդ առանց հերքուելէ վախնալու կրնան յայտարարել թէ յաջողած են կեանքի մէջ:

* *

Մեծանուն միլիոնատէրը՝ — որ տակաւին այս վերջերս կը յայտարարէր թէ իրեն համար շատ աւելի դիւրին է 7—10 տարուան մէջ քանի մը հարիւր միլիոն տուար շահիլը՝ քան թէ նոյնքան աննշան գումար մը ծախսելը, — երբեք իր խորհուրդները չէ զլացած ամէն անոնց՝ որոնք կրնային այդ տեսակ անկեղծ խօսքերու պէտք ունենալ: Այս մարդը՝ որուն մէկ ժամուան եկամուտը մեզի պէս քանի մը հոգի կրնայ հարստացնել, փայ-

լուն սկզբնաւորութիւն մը չէ ունեցած բնաւ, և այդ բանը եթէ ո՛չ անհրաժեշտ, գոնէ շատ օգտակար կը նկատէ կեանքի յաջողութեան համար: Տակաւին իր խրատներուն չանցած, կը յիշեցնէ թէ ամերիկեան ընկերութեան մէջ մեծամեծ գիրքերու տիրացած ամէնէն անուանի դրամատէրները շատ համեստ սկզբնաւորութիւններ ունեցած են, և առաջին պատասխանատուութիւնը որ տրուած է իրենց, խանութներ աւելու դործը եղած է, այսինքն աւելելով դրած են իրենց ապագայ գիրքերուն հիմը: «Հիմայ, կ'ըսէ, մեր վաճառատունները դա՛նապա՛ններ ունին և երիտասարդ պաշտօնեաները զրկուած են առեւտրական դաստիարակութեան ամէնէն հրահանգի մէկ շրջանէն, աւելին չըջանէն. բայց եթէ օրին մէկը, վաճառատունը աւելի դա՛նապա՛նը կամ սպասաւորը բացակայ են՝ դեռատի պաշտօնեաները պէտք է որ բռնեն անոնց տեղը, մանաւանդ երբ կ'ուզեն պաշտօնեայի գիրքէն ընկերակցի գիրքին հասնիլ: Եւ արդէն, սկսնակի մը երբեք չի վնասեր աւելին դործածութիւնը. ես ինքս խանութ աւելելով սկսած եմ, և երեւակայացէք անգամ մը թէ որո՞նք եղած են ընկերներս. անոնցմէ մէկն էր Տավրա Մաք Քարկոն՝ այս պահուստ անօրէն Ալլէկանիի երկաթուղիին, միւսը Ռօպըրթ Բիթքըրնը՝ հիմայ անօրէն Բէնսիլվանիոյ երկաթուղիին, նաեւ Պ. Մօռլանդ՝ որ ընդէ. դատաստաղ անուանուած է: Երեքս ալ լուիկ մնջիկ մեր աւելին կը փարէինք: Կը յիշեմ նոյն իսկ թէ Տավրա փողկապ մը կը դնէր և մինք որ փողկապ չունէինք, չռայլ մարդ մը կը նկատէինք դային»:

Այս պարզ նկատողութենէն վերջ, Պ. Քառնէկի իբր առաջին խորհուրդ՝ երիտասարդներուն կը յա՛ճնարարէ միշտ բարձր հետաքննել: Իր կարծիքով, պաշտօնեայ մը որչա՛փ որ ալ հետդնետէ յառաջդիմութիւն ունենայ, պէտք չէ դո՛ւ մնայ իր վիճակէն: «Իմ տեղս աւելի առաջ է», պէտք է ըսէ, միշտ աւելի բարձր, միշտ աւելի մեծը հետապնդելով իր ծառայած վարչութեան պաշտօններուն: Աօրկա անշուշտ դիւրին դործ մը չէ, և Պ. Քառնէկի ալ կը խոստովանի

այդ կէտը. միայն թէ ատոր իրագործումը անկարելի չի նկատեր, և ցոյց կու տայ այն միջոցները՝ որոնցմով կարելի է հասնիլ այդ նպատակին: Իր աչքին՝ այդ արդիւնքը ձեռք բերելու համար, իբր առաջին ու գլխաւոր պայմաններ պէտք են պատուաւորութիւնը, անկեղծութիւնն ու վեհանձնութիւնը: «Ամէնքդ ալ դիտէք որ, կ'ըսէ, անկարելի է ճշմարիտ յաջողութիւններ գտնել և արժանի գովեստներ ստանալ՝ առանց պատուաւոր, վեհանձն և անկեղծ ըլլալու: Կ'ենթադրեմ թէ այդպէս էք ու պիտի մնաք, թէ որոշած էք մաքուր և յարգելի կեանք մը վարել, առանց երբեք մէկ կամ միւս սեռին հետ վտանգաւոր կամ կասկածելի յարաբերութիւններ մշակելու: Առանց ասոր, անկարելի է որ ապագայ մը ունենաք. հակառակ պարագային, ձեր գիտութիւնն ու խելքը ո՛չ թէ միայն ձեզի անօգուտ պիտի ըլլան, այլ ա՛լ աւելի պիտի շեշտեն ձեր պարտութիւնն ու ամօթը: Այս պատճառաւ անշուշտ անհաճօյ չպիտի թուի ձեզի՝ եթէ երբեք ձեզ զգուշացնեմ երեք գլխաւոր վտանգներու դէմ՝ որոնց պիտի հանդիպիք ձեր վերելքին մէջ»:

Տեսնենք հիմայ թէ որո՞նք են այդ երեք գլխաւոր վտանգները:

Առաջինը՝ զոր Պ. Քառնէկի ամէնէն հրապուրելի կը նկատէ, ալօրամոլութեան դէմ Մի՛ խմէք, կ'ըսէ, ես ալքոլամոլութեան դէմ հիմնուած ընկերութեան մը անդամը չեմ, բայց իմ անձնական փորձառութեանս վրայ հիմնուելով կը յանձնարարեմ ձեզի որ չխմէք: Որովհետեւ ամէնէն աւելի խմելու ունակութիւնն է որ կրնայ խորտակել ձեր ասպարէզը, և մի՛նակը այնչա՛փ վնաս պատճառել ձեզի՝ որչա՛փ չպիտի կրնային պատճառել միւս բոլոր փորձութիւնները միացած: Եւ սակայն, դիւրին բան մը չէ խմելէ հրաժարիլ, մանաւանդ անոնց համար որոնք անգամ մը իրենց վարժութիւն ըրած են ոգելից ըմպելիներու գործածութիւնը: Պ. Քառնէկի չուրանար այս պարագան, ու կը յորդորէ գոնէ չափաւորութիւն մը՝ դնել այդ ունակութեան գոհացման մէջ, և կարելի եղածին չափ զգուշանալ զօրաւոր ոգելից ըմպելիներէ: «Օրի-

հակի համար, կը յարէ, գաւաթ մը գինի կերակուրին հետ՝ երբեք չի կրնար արգելք մը ըլլալ ձեր յառաջացման, ոչ ալ ձեր ջրային զօրութեան վնասել, բայց այդչափ միայն. կերակուրի միջոցին խմեցէք այդ գաւաթ մը գինին, և երբեք զայն մի՛ վնասէք գինետան սեղաններուն վրայ. գինետունէ մը ներս մտնելը պատուաբեր բան մը չէ ինքզինքը գիտցող մարդու մը համար, և անոր յառաջացման ամէնէն մեծ արգելքը կրնայ ըլլալ»:

Երկրորդ գլխաւոր վտանգն է ռահադի-սուքիւնը: Պ. Քառնէկի մեծ համարում մը չունի Սակարանի շահադէտներուն վրայ և իբր բարոյապէս ու նիւթապէս անանկացած մարդիկ ցոյց կու տայ զանոնք: Զկայ մէկը, կ'ըսէ, որ շահադէտութեան շնորհիւ հարստացանալէ վերջ կրցած ըլլայ իր հարստութիւնը պահել: Կը վստահեցնէ թէ խաղացողները աղքատ կը մեռնին, և երբեք չի յիշեր տեսած ըլլալ խաղացող մը որ պատուաւոր մարդու համբաւով մը ապրած, և օգտակար դարձած ըլլայ իր համայնքին: «Շահադէտն ու զործի մարդը, կը յարէ, բոլորովին կը տարբերին իրարմէ: Առաջինը բաղդի անիւին յանկարծական մէկ դարձումքէն կախում ունի. այսօր միլիոնատէր է, վաղը անանկ: Գործի մարդը սակայն գիտէ թէ տարիներու ուշադիր աշխատութեամբ և համբերութեամբ միայն կրնայ իր վարձատրութիւնը ստանալ, և այդ վարձատրութիւնը դիպումածի մը պըտուղը չէ, հապա արդիւնքը իր հնարամիտ աշխատութեան: Երկար կ'աշխատի՝ բայց անցնող տարիներու այդ շրջանին մէջ գոնէ կըրնայ մխիթարուիլ թէ իր իրագործած շահերէն իւրաքանչիւրը միևնոյն ատեն ուրիշներու բարօրութեան պատճառ եղած է: Մինչդեռ, ընկերութեան բարիքին համար լաւագոյն բան մը եղած պիտի ըլլար՝ եթէ երբեք շահադէտը գոյութիւն չունենար»: Յետոյ, Պ. Քառնէկի ցոյց կու տայ շահադէտութեան մէկ ուրիշ վնասը որ ոչ նուազ էական կրնայ նկատուիլ: Գործի մարդոց յաջողութեան գլխաւոր պայմաններն են, կ'ըսէ, անաղարտ վարկ մը՝ և վստահութիւն մը իրենց խոհ-

մութեան նկատմամբ: Արդ, երբ գործի մարդ մը շահադէտութեանց կը ձեռնարկէ, իր վարկը կ'իյնայ իսկոյն, և շատ չանցած բոլորովին կ'ոչնչանայ, նոյն իսկ եթէ այդ առաջին քայլերուն մէջ իր շահադէտութիւնները արդիւնաւոր եղած ըլլան: Որովհետեւ, շահադէտութեան սկսելուն պէս, իր նիւթական կարողութիւնը կ'եղլէ հաստատուն հիմերու վրայէն, և մէկ վայրկեանէն միւսը կրնայ ամբողջովին կորսուիլ ձախողուածի մը երեսին: Ինչպէ՞ս վարկ բանալ այն տեսակ մարդու մը՝ որ այդ աստիճան անհաստատ ու մէկ օրէն միւսը անհետանալու վտանգին ենթակայ նիւթական միջոցներ միայն ունի ձեռքը:

Երրորդ և վերջին գլխաւոր վտանգն է երաշխաւորութիւնը: Պ. Քառնէկի մասնաւոր հոգատարութեամբ մը երիտասարդները կը զգուշացնէ այս վտանգին դէմ. գիտէ որ մարդիկ տկար եղած են ու պիտի ըլլան անոր մասին, և ասիկա անոր համար որ միշտ յանուն բարեկամութեան կը ներկայանայ: Բարեկամ մը ձեզի կը դիմէ և կ'աղաչէ որ իրեն երաշխաւոր ըլլաք սա չափ գումարի մը համար: Մեծ բան մը չպիտի ըլլայ ձեր ընկելքը. պարզ ստորագրութիւն մը միայն պիտի դնէք, ու կը մտածէք թէ բացարձակապէս անվայել բան մը ըրած պիտի ըլլաք ձեր բարեկամին մերժելով այդ աստիճան աննշան ծառայութիւն մը: Եւ սակայն «երաշխաւոր մի՛ ըլլաք» կը գոչէ Պ. Քառնէկի, որ այդ կարգի գործառնութեանց արդիւնք եղող այնչափ կործանումներու ակնատես եղած է: Անոնց համար մասնաւոր ուրոնք պարտքեր ունին, երաշխաւոր ըլլալը ո՛չ թէ միայն վնասակար, այլ նաև անվայել կը նկատէ, մէջ բերելով հետեւեալ պատճառարանութիւնները. — «Եթէ պարաք մը ունիք, ձեր բովանդակ դրամագլուխն ու ապրանքը ձեր ձեռքը աւանդներ են միայն՝ զորս պարտաւոր էք անվնաս պահել՝ նոյն իսկ այն մարդուն ապահովութեան համար որ վստահութիւնը շնորհած է ձեզի: Այդ մարդը ձեր վըրայ իրաւունքներ ունի, և եթէ այդ իրաւունքները վտանգէք, պատուաւոր բան մը ըրած չէք ըլլաք: Պարտական մը երբ երաշխա-

ւոր կ'ըլլայ ուրիշի մը համար, իր յատուկ վարկն ու դրամագլուխը չէ՛ որ կը վտանգէ, այլ իր պարտատիրոջ վարկն ու դրամագլուխը»։ Պ. Քառնէկի սակայն բոլոր դուռները չի դուրս ելած արդ գործառութեան համար։ «Այն ատեն միայն երաշխաւոր եղէք, կ'ըսէ, երբ ձեր երաշխաւորութեան տակ անցած գումարը վճարելու չափ կանխիկ դրամ ունիք, բացի անկէ՛ որ պէտք է ձեր պարտքերը վճարելու համար»։ Ու կրկին առանց վերապահու մի չէ՛ որ արդ մէկ դուռը բաց կը թողու։ Ի՛նչ գումարի համար որ երաշխաւոր դառնաք, կը յարէ, անա՛նկ նկատեցէք թէ այդ գումարը ձեր բարեկամին նուէր մը ըրած պիտի ըլլաք։ Խորհեցէք նախ թէ այդ գումարը ձեր դրամէն կը նուիրէք թէ ոչ ձեր պարտատէրներուն դրամէն, և եթէ ձեր դրամէն է որ կը նուիրէք, լաւ մը հաշուեցէք թէ կրնա՞ք այդ տեսակ նուէր մը ընել առանց ձեր գործառութիւնները վտանգելու։

Ահաւասիկ ստոնք են այն երեք գլխաւոր վտանգները՝ որոնց պիտի հանդիպի գործի ըստ կսող երկրասարդ մը իր նախաքայլերուն մէջ, և որոնց յաղթելով միայն պիտի կրնայ յաջողութեան առաջին և ամենաէական պայմանները գոհացնել, այսինքն պատուաւոր, վեհանձն և անկեղծ աշխատաւոր մը դառնալ և միտք աւելի յառաջդիմութեան հետապնդել։

* *

Արդ, ենթադրենք որ երկրասարդ մը կրցած է պարտութեան մատնել այդ երեք գլխաւոր վտանգները, և իր վրայ կը միացնէ պատուաւորութեան, անկեղծութեան ու վեհանձնութեան յատկութիւնները։ Ի՛նչ պէտք է ընէ յաջողելու, այդ միտք աւելի յառաջադիմին հասնելու համար։

Գաղտնիքը որչափ ալ մեծ երեւայ, Պ. Քառնէկի հոգի չի հաներ դայն յայտնելու համար. — «Յաջողելու համար, կ'ըսէ պէտք չէ մտածէք թէ՛ ի՛նչ կրնաք ընել, այլ պէտք է խորհիք թէ ի՛նչ պարտաւոր եք ընելու։ Խորհմտութեամբ և հաւատարմօրէն ձեր պարտականութիւնը կատարելը լաւ բան մըն է անշուշտ։ Բայց այդ պարտաւորին՝ ահա թէ ինչ պիտի մտածեն ձեր վրայ. — Այս երկրասարդը,

պիտի ըսեն, այնքան լաւ կը կատարէ իր պաշտօնը որ մեզի աւելի աղէկ պիտի ըլլայ միշտ այդ պաշտօնին վրայ մնալը։ — Է՛հ ուրեմն, պարոններ, ատանկով մարդ չի յառաջանար, ատանկով մարդ ընկերակից մը, չահակից մը չի կրնար դառնալ։ Աւելին պէտք է ընել։ Այդպէս աշխատող մարդիկը շատ շատ գործակատար, հաշուաւոր կամ գանձապահ կրնան ըլլալ, և այդ հանգամանքով կը մնան մինչեւ իրենց մահը։ Այն մարդը որ իր ծառայած վարչութեան մէջ կ'ուզէ գերազանցապէս յառաջդիմել, արտակարգ և իր պաշտօնէն աւելի վեր բան մը պէտք է ընէ. — ՊէՏՔ Է ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԱԽԷ։ Եթէ առաքմանց պաշտօնեայ է, պէտք է աշխատի գտնել այն տեսակ սխալ մը որուն հոգը իրեն չէ տրուած, և որ սակայն վրիպած է բուն իսկ պատասխանատու եղողին ուշադրութենէն։ Եթէ ապրանքներ կը շարունակէ բաժնին մէջ է իր պաշտօնը, վաճառատան տէրերուն խնայողութեան առիթ մը տուած ըլլալու համար պէտք է անձամբ ստուգէ կրիւնները և ի հարկին ճշդէ դանօնք, հոգ չէ թէ այդ գործին համար իրմէ շատ աւելի բարձր պաշտօնեայ մը գոյութիւն ունենայ։ Ամէնէն հասարակ պաշտօնին մէջ ալ մարդ միշտ կրնայ այս կարգի յատկութիւններով ուշադրութիւն գրաւել, և գրեթէ միշտ ապացուցանել թէ օր ըստ օրէ աւելի վստահութեան, օր ըստ օրէ աւելի պատասխանատու գործի մը կոչուելու արժանի է։»

Պ. Քառնէկի շատ ձոյն է օրինակներու մասին, ու կ'աւելցնէ միեւնոյն ապահովիչ ու վստահ չեղաւ. — Օր մը հրաման կը ստանաք ձեր պաշտօնին սահմաններուն մէջ գտնուող և ձեր վաճառատան շահերուն նըպատաւով գործ մը ընելու, կամ կարծիք մը յայտնելու։ Ահա՛ ձեզի պէտք եղած առիթը։ Խօսեցէք քաջաբար բացատրեցէք ձեր մտածածը, և ատու ցոյց տուէք ձեր վարպետին որ մինչդեռ իր միտքը ուրիշ տեղ զբաղած է, դուք, մանաւանդ անանկ ատեն մը ուր ձեզ քնացած կամ անտարբեր կը կարծէր, դուք կը հակէիք իր շահերուն վրայ, դուք իր շահերը աւելցնելու եղանակներ կը խորհէիք

ամբողջ ժամեր: Ձեր մտածածին սխալ կամ ձիւղ ըլլալը հոգ չէ. ասով ուշադրութիւն դրաւած պիտի ըլլաք, և ա'ս է արդէն ձեզի պէտք եղածը: Ձեր վարպետը հասկցած պիտի ըլլայ թէ դուք պարզ վարձկան մը չէք, այլ մարդ մը, թէ դուք չէք դոհանար սա չափ վարձատրութեան մը փոխարէն սա չափ աշխատութիւն տալով, այլ ձեր պարապոյ ժամերուն մէջ ալ վաճառատան շահն ու բարիքը կը խորհիք: Այս մտածումէն թեւադրուելով, վարպետնիդ անպատճառ ձեր յառաջացման պիտի բաղձայ: Տեսնելով թէ ի՞նչ տեսակ տարր մը ունի ձեռքին տակ, օր մը կրկին ձեր կարծիքը պիտի փոխուէ վաճառատան գործերուն նկատմամբ. եթէ կարենաք լաւ թեւադրութիւն մը ընել, դարձեալ ձեզի պիտի դիմէ ուրիշ առթիւ մը: Եւ պաշտօնեայ մը, այսպէս իր անհրաժեշտութիւնը դգաւի ընելով է որ կրնայ ընկերակից մը, շահակից մը դառնալ:

Ահաւասիկ խրատներ՝ որոնց օգուտը անուրանալի է անշուշտ, և անպայման ամէն գործի համար սկսնակներուն արուելիք լաւագոյն խորհուրդներ չպիտի կրնայինք զըտնել: Ինքզինքը անհրաժեշտ դարձնել իր պատկանած վաճառատան մէջ, իր պէտքը զգացնել շարունակ, ահա յաջողութեան գաղտնիք մը՝ որ ոչ մէկ առարկութեան առջեւ կրնայ տեղի տալ: Եւ որչա՞փ առողջ ու հիմնաւոր են այն միջոցները, զորս Պ. Քառնէկի ցոյց կու տայ այդ գաղտնիքին տիրանալու, այդ գաղտնիքէն օգտուելու համար: Ամէն բանէ առաջ գործնական մտքի տէր մարդ մըն է, և կը խորշի կարգ մը պայմանադրական խրատներէ, — վերացական բաներ ամէնքն ալ, — զորս յաճախ կը կրկնեն նոր սերունդներուն, և որոնք երբեք չեն կրնար անոնց յաջողութեան նպաստել:

Իբր օրինակ առնենք հետեւեալ խրատը՝ որ այդ դասակարգին կը պատկանի և զոր այնչափ անգամներ կը կրկնեն սկսնակ պաշտօնեաներու. — «Պարտաւորութեանդ սահմանները մի՛ անցնիր, նոյն իսկ եթէ ատով վարպետներուդ կործանման պատճառ ըլլաս»: — Այս չէ սակայն Պ. Քառնէկի կար-

ծիքը: Ընդհակառակը, մի՛ հետեւիք կ'ըսէ այդ խորհուրդին, ատկա չի կրնար կանոն մը ըլլալ ձեզի համար. գլեցէ՛ք անցէք ձեր պարտաւորութեան սահմանները, երբ պէտք կայ ձեր վարպետները փրկելու: Անկարելի է որ մարդ մեծ նկարագիր մը ունենայ և պէտք չտեսնէ երբեմն փոխելու իր վրայ դրուած աշխատելու սահմանը: Մի մոռնաք մանաւանդ որ դուք ալ սահմանուած էք օր մը վարպետ դառնալու, հրահանգներ տալու, կանոններ հաստատելու: Մի՛ վարանիք ուրեմն՝ ամէն անգամ քր ապահով էք թէ իրապէս ձեր վարպետներուն շահերը կը փրկէք, և թէ գործին ելքը պիտի կարենայ ձեզ պատասխանատուութիւնէ ազատել: Երբեք չպիտի կրնաք ձեր վարպետներուն շահակիցը ըլլալ, եթէ երբեք ձեր վաճառատան գործերուն նկատմամբ անոնցմէ լաւ գաղափար մը չունենաք: Եթէ ձեզմէ բացատրութիւններ պահանջեն կանոնը չյարգելնուդ, ձեր պարտաւորութեան սահմանները անցնելուդ համար, ցոյց տուէք անոնց ձեր ճարպիկութեան արդիւնքը, ձեր փրկած շահերը, աւելցնելով թէ նախապէս վտանգ էիք որ այդպէս պիտի ըլլար. ցոյց տուէք նաև թէ որչա՞փ սխալ էին արուած հրահանգները քանի որ եթէ անոնց հետեւած ըլլայիք չպիտի կարենայիք փրկել խնդրոյ առարկայ եղող շահերը: Եթէ վարպետնիդ ձեզի պէտք եղած մարդն է, անպատճառ պիտի ուրախանայ այդպէս ձեզ իր շահերուն հոգածու տեսնելով. եթէ ձեզի պէտք եղած մարդը չէ, մի՛ կենաք անոր քով, լքեցէք զայն երբ որ կրնաք, նոյն իսկ եթէ ասոր համար զոհողութիւններ պէտք ըլլան, և ջանացէք գտնել այն տեսակ վարպետ մը որ պիտի կրնայ ձեր արժանիքն ու կարողութիւնները գնահատել: Միայն թէ կանուխէն ըրէք այդ փորձը, որպէս զի ժամանակը անցած չըլլայ:

* *

Ահա ասոնք են այն խորհուրդները՝ զորս Պ. Քառնէկի, իր անհրաժեշտութեան յենդով կուտայ նոր սերունդին, յաջողութեան ճամբուն մուտքը դէրացնելու համար: Բայց

կայ հատ մըն ալ զոր վերջին կը վերապահէ, և որ յաջողութեան լաւագոյն պայմաններէն մէկը կրնայ նկատուիլ, — այսինքն խնայողութիւնը:

Պաշտօնեայի մը վրայ, կ'ըսէ, ապագայ շահակիցը, ապագայ միլիոնատէրը զգալիորդ գլխաւոր յատկանիշ մը կայ, — իր հասոյթները միշտ աւելի են իր ծախքերէն: Կանուխէն, գրեթէ չափի սկսած օրէն խնայողութիւններ կ'ընէ: — Խնայեցէք ուրեմն, կ'աւելցնէ վճարար, խնայեցէք, որչափ ալ քիչ ըլլայ ձեր խնայելիքը. յետոյ ապահով կերպով մը շահու գրէք ձեր խնայողութիւնները. մի' տատախ սիք, գնեցէք ո' և է բաժնեթուղթ որ ձեզի ապահով ու հաստատ կ'երևայ. բայց, երբեք շահագիտութեան հետամուտ մի' ըլլաք. մտաքերնուդ մի' հանէք այս կէտը: Առիթներ չպիտի ուշանան ձեզ վարձատրելու համար, և այն քիչը զոր խնայած էք, տակաւ հիմը պիտի դառնայ վարկի մը որուն մեծութիւնը ձեզ պիտի զարմայնէ: Դրամագլուխի տէրերը միշտ վստահութիւն ունին խնայասէր երիտասարդներու վրայ: Իւրաքանչիւր հարիւր տողարի համար զոր խնայած էք, հազար տողարով ընկերակից մը պիտի գտնէք, կամ հազար տողարի փոխառութիւն մը պիտի կարենաք կնքել. խնայուած իւրաքանչիւր հազար տողարի համար ալ 50,000: Ձեր երէցները դրամագլուխներու պէտք չունին, այլ այն տեսակ մարդոց՝ որոնք կրցած են փորձով ցոյց տալ թէ «գործեր» ստեղծելու համար ամէն յատկութիւն կը միացնեն իրենց անձին վրայ. և բարոյական տեսակէտով այդ յատկութիւններուն լաւագոյնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ իր ծախքերը իր միջոցներուն, իր շահուն վրայ ձեւելու խելացիութիւնը:

Այս գեղեցիկ խորհուրդներէն վերջ, զօրս Պ. Քառնէկի իր միլիոններուն պէս չուայլօրէն կը բաշխէ, կը մնայ կրկնել իրեն հետ. — Պարտնէս'ը, խնայուած առաջին հարիւր տողարներն են որոնք կը յայտնեն թէ ի՞նչ պիտի ըլլայ մարդ մը: Իսկոյն սկսեցէք քիչ մը բան մէկ կողմ դնելու. որովհետեւ, մեղուի պէս աշխատելով է որ մարդ կրնայ միլիոնատէր դառնալ:

ՄԼԻՍԻՏԷՍ

ԳՐԱԲԱՐԸ՝ ԱՅԺՄԷԱՅԱԾ



Աւետաբեր՝ իր վերջին թիւի «Հայ Թերթեր» գլուխին մէջ՝ Մասիսի գլխաւոր յօդուածները նօթագրելու առթիւ, կը գրէ. — «Տիգրան Եւքէնճեան դրաբարի թարգմանած է Լոնկիթէօի «Փարոս» խորագրով ոտանաւորը և յաջողած է բանաստեղծին միտքը հասկնալ և արտայայտել»: Իմացանք թէ Աւետաբերի խմբագրութիւնը՝ որուն ձեռնաստութիւնը անփոփոխ է անգլիէրէնի մասին՝ այս երկտող դեահատականը գրելէ առաջ խղճամիտ բաղդատութիւն մը կատարած է բրնադրին և թարգմանութեանը միջև, զոր հարազատ կը դռնէ: Գալով այդ քերթուածի բուն իսկ գրաբարին, շատ մը ծանօթ գրագէտներու և դրաբարագէտներու դեահատական արտայայտութիւնները լսեցինք անոր ճոխութեանը մասին, զոր հրապարակելու զղջենք յարգելի թարգմանչին: Մօտաւոր թիւով մը պիտի հրատարակենք Տիգրան Եւքէնճեանի գրական մէկ առաջարկը՝ միշտ դրաբարի շուրջը:

* *

Հանգուցեալ Լէոն Ժ. Գ. Պապին՝ իր հիւանդութեան անկողնին մէջ գրած վերջին տաղը, զոր յաջորդաբար դրաբարի թարգմանած էին Յ. Գ. Մրմըրեան և Յ. Գուրգէն Ծաղիկի մէջ, այս անգամ լատիներէն բնագրին վրայէն դրաբարի վերածած է Նաե մեր ծանօթ աշխատակիցը, Տիլէթանթ, որ Արեւիկի ու Մասիսի մէջ շարք մը հմտակից ու սրամիտ յօդուածներով մասնակցեցաւ Ոսկեղաւորու դրաբարին շուրջը յարուցուած վէճին: Յաջորդ թիւով պիտի հրատարակենք այդ թարգմանութիւնը:

Յաջորդ թիւով Ձիթէ-Սարաֆի եղբակացութիւնը՝ գաւառացի կիներու ամուսնական բարքերու մասին իր հրապարակած Հարցումին պատասխաններուն: Նոյնպէս, շահեկան գրուածք մը Սղէլլայէ... ամերիկեան ամուսնութեանց վրայ:

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ԱՂԵՔԱՆԴԵՐ ՓԱՆՈՍԵԱՆ

Պատիկ rentier մը, — ներկայացնելու համար զինքը՝ նախ դրական աշխարհէն դուրս, իր անհատական կեանքին մէջ, — ամուսնացած և զաւելըներու տէր, թէև դեռ երիտասարդ կրնայ նկատուիլ։ Ուղիղ հասակ, բարձր ըստելու չափ լարեքիկ, խրոխտ քառածք, լայն ճակատ, բայց կապոյտ աչքեր և մութ խարտեաշ մազեր՝ միշտ կարճ կըտրուած՝ հակառակ իր «սպակաւոր» կոչուելու արժանի ամուր համբաւին, — եթէ երբեք «սպակաւոր բանաստեղծ» ունենայինք մեր մէջ։ Ընկերային մարդ, բառին ընդարձակ առումովը, բնաւին մենամոլ ու խրոչող ընդհակառակը. սալօնի մը կամ երեկոյթի մը մէջ իր ներկայութիւնը զուարթութիւնն իսկ է։ Իր յանգերուն չափ յաջող սրախօսութիւններ ունի միշտ լեզուին ծայրը, ընկերութեանց մէջ, և յաճախ բառախաղեր ու անէկոտորներ կը սլարէ՝ եթէ հարկ ըլլայ ու պրիչ կը խաղայ՝ երբ ձանձրանայ։

Իրեն բանաստեղծ՝ զինքը յատկանշելու պէտք իսկ չիկայ, այնքա՛ն բաղմակողմանի յատկութիւններով ծանօթ է արդէն. վերջին քսան տարիներու միջոցին, ո՛չ մէկը մեր ժամանակակից քերթողներէն արտադրած է իրեն չափ ոտանաւոր, քանակը չտկարացնելու պայմանաւ որակը, միշտ ազնուադոյն տեսակէ, իմաստալից, խնամուած ու պէսպիսութեամբ լեցուն։ «Ծոխ յանդերու հարուստ հանք» ունեցողի բառախաղը իրեն համար միայն պիտի կրնար գործածուիլ նոյնքան ճշմարտօրէն որքան ճիշտ է նաեւ թէ հետեւողներէ աւելի իրեն նմանելու ձգտողներ կուրենայ։ Կը բաւէ որ բոլորովին նոր ձև բանաստեղծութիւն մը նետէ հրապարակ. իր պիտակին կեղծերը ծայր կուտան իսկոյն աչէն ձախէն, Պոլսէն ու գաւառներէն։ Լա-

ւադոյն պիտի ըլլար, եթէ ատոնք նկատէին զինքը իրեն պետը Դպրոցի մը որ մեր մէջ մայուց, տարածեց fantaisie բանաստեղծութիւնը, ժպտուն, ծիծաղկոտ, հեգնոտ, բարիզեան նրբութեամբ՝ թէև միշտ հայ դրոշմով, առակը, — իր եղբորոսական հին ձեւէն մերկացած —, causerie, monologue, աշխարհիկ պատմութիւնը, — հարկ չիկայ ըսելու ամէնքն ալ ոտանաւոր. վասն զի, իր արձակներն ալ մէյմէկ ոտանաւոր են՝ արձակաձև դրուած ըլլալու տարբերութեամբ։

Աղեքսանդր Փանոսեան վիճաբանող մըն է, կծու, խայթող զրիչով մը, իր բանաստեղծի հանդամանքը չկորսնցնելու պայմանաւ սակայն. և Արմանայիներուն ուղղած իր հոչակաւոր մեղայադիրէն առաջ ու ետքը ունեցած է դրամարտեր որոնք զգետնած են իր ընդգիմալսօսները կամ նախանձորները. հաղուադիւտ է որ, դրական հրապարակի վերայ, նետուած ձեռնոց մը չի յափշտակէ՝ մեծ նամարտէ խոյս տուողի պէս. բացառութիւն, երբ ձեռնոցը կեղտոտ կ'ըլլայ կամ զայն նետող մատները շատ կոշտ։

Այն շքեղ երեւոյթով ու մարմնական հարուստ գեղեցկութեամբ լեցուն կիներուն պէս որոնք որչափ փորձեն դիմակաւորուիլ՝ միշտ կը յայտնուին, Աղեքսանդր Փանոսեան ի զուրկարօտը կը քաշէ մերթ ընդ մերթ նոր ծածկանունով մը երեւնալու՝ վայելելու համար իր թողելիք տպաւորութիւնը գիտցողի անխառն հաճոյքը. այդ ծածկանունը նոյն իսկ եթէ Աստիկի կամ Արիստոյմի պէս հասարակ ստորագրութիւն մը ըլլայ, յաջորդ օրը, յայտնութիւնները կը սկսին ու գաղտնիքը կը դառնայ Բոլիշինսկի գաղտնիք մը։

Այս զուարթ, humoriste բանաստեղծը կը դերադանցէ նաեւ մեղամաղձոտ քերթուածներու ճիւղին մէջ, արտադրելով այնքան զգայնոտ տաղեր որ գուարաւ պիտի հնչտայիք, օրինակի համար, թէ Շոգեմալին մեզ վերնադրով ոտանաւոր-ժամանցին հեղինակն է Անմեռուկ ախրանուագ քերթուածին ալ հեղինակը, եթէ վաղուց չգիտնայիք թէ Ալփասլան ու Աղեքս. Փանոսեան հոմանիշ են։

Գ.Ա.ՄԷԼԵ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՄԵՐ ԵՒ ՕՏԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Բ

Սակայն գիտնալու է թէ հողեկան տա-
նապանքը կարեւոր է բանաստեղծութեան
համար: Մեծ քերթողներ մինչեւ իսկ վնտ-
նած են դայն ու անոր մէջ սորված են ինչ
որ երգերով մեզի կը պատմեն: Ամէն ոք
գիտէ թէ Տանդէ տարագրութեան մէջ գրեց
իր գլուխ-գործոցը: Տօն Բիւօթի հեղինակը
Սէրվանթէս՝ չքաւոր մնալ ուզեց, ու Սպա-
նիացիները յօժարակամ թողուցին զինքը այդ
վիճակին մէջ, ա՛յնքան հոյակապ գրականու-
թիւն մը աճեցուն բուսցնելու համար թշուա-
ռութեան վիհին եզերքը: Ու մեր ամէնուն
սրտին մօտիկ Դուրեանը հագեցարքի պահուն
չէ՛ր որ գրեց իր «Տրտունջ»ը: Ոսկին կ'եղ-
ծանէ շատ հեղձ հանձարը: Հարստութեան
շողշողուն արեւին՝ կէօթէ մը միայն բարձ-
րացած է ու իր փլինկի թեւերը անխանձ
մնացած են անոր կիզիչ ճառագայթներուն
սակ: Միւս կողմէն՝ ակամարութիւն է ելլել
տառապանք փնտռել՝ բանաստեղծ դառնալու
խաբկանքով: Կեանքը արդէն բաւական տա-
նապանքի ըստ կը ծանրցնէ քիչ թէ շատ ա-
մէն ուսի վրայ: Պէտք է վայելք փնտռել,
վայելումի պատենութիւններ ստեղծել, և
եթէ դժբաղդութիւնը կարթ նետէ մեր բե-
րանը, հողիին ու դառնացած սրտին երգե-
րուն մէջ կորով դնել: Սիրային յոյսերը,—
զով, կանանչադարձ ովասիսներ միտքի չոր
անապատին մէջ,—մեր բանաստեղծներու
մերժուողի դիրքին մէջ ցուրտ պատրանքներ
կ'ըլլան, մահուան մէջ տառապանքի լուծ
մը: Իրենց համար պատրանք մըն է յոյսը շատ
հեղ թէ՛ գերեզմանին մէջ ինքնութենէն դեռ
վառ պիտի մնայ նշոյլ մը, տաք պիտի մնայ
կրակ մը: Սէրը հաւատք մը, պաշտում մըն
է նախ, նուրբ հնարքներ ատելի են, անի-
մաստ ու ապուշ, երբ սէրը փոխադարձ է,
բայց ետքը՝ սէրը իմաստակ կը դառնայ, և
լըջացած ու արթուն, իրենք կը քննեն տար-

տա՛մ, խուսափող անցեալը. սիրտը ա՛լ չունի
բուխ կակղութիւն: Աս ալ կ'անցնի ու նո-
րէն՝ սիրոյ ղննիչի դիրքէն կիցնան սիրոյ մէջ
մերժուածի մը դիրքին ու կը սողեն իրապէս
սիրուն ոտանաւորներ մը:

* *

Մեր ամէն օրուան փորձառութիւնը կը
ցուցնէ թէ ընդհանրապէս ինչ որ իբր բա-
նաստեղծութիւն գրուած է, որոշ պատկեր
քիչ ունի, բացատրութիւնը չէ՛ այնքան կըր-
քոտ ու վառ. երբեմն խիստ անորոշ, տար-
տա՛մ ուրուագիծներ ցաւի, որովհետեւ կա-
րելի չըլլար վիշտը իր ամբողջ, զանգուա-
ծային լեցունութիւնով բաւերու մէջ պար-
տեղել. երբեմն լո՛կ աղուոր բաւեր իրարու
քով շարուած ո՛չ պատկեր կը գտնեն, ո՛չ
դեղեցիկ գիւտ մը կը պարունակեն և ոչ ալ
լման բան մը կը խօսին: Տրտնջացող շնչտեր
են անոնք: Դժբաղդ սիրային անյաջողու-
թիւնները, յուղումներու անկանոն, խառնի-
ճաղանձ հոտանքը ու գրական օտար աղ-
ղեցութիւնները՝ դատողութեամբ ա՛յնքան
չուժովցած միտքերու՝ այլասերածներ դար-
ձուցած են մեր հիմակուան բանաստեղծներէն
ոմանք: Դրականութեան սիրուն, ցեղին մա-
քուր, նուիրական հանձարը, քերթողական
ընդունակութիւնը չեղծելու համար. պահ-
պանելու համար տոնիկի գրականութեան ինք-
նուրոյն երանգը, մեր բանաստեղծութիւնը, մի՛
գրէք օտար սխալ աղղեցութիւններ ներմուծե-
լու համար: Բայց թէ՛ հրապարակագրութիւն,
թէ՛ գրական այլազան արտադրութիւններ,
դժբաղդաբար, անգիտակից ներմուծողներ
են ապրանքներու, օտար՝ գոյնով, տեսակով,
նիւթով, ուրկէ կարելի չէ՛ մեր աչքերը հա-
ճեցնող, մեր մարմինին յարմարօրէն փակող
հանդերձներ կտրել, կարել. նորաճեւութեան
համեմատ կամ խիստ նեղ տափասներ, ար-
իւնը խղճող օձիկ և դեռ ինչ որ կուզէք
պիտի վայելէ՞ն մեզի:

Երբեք կրնա՞նք ըսել թէ մեծ չեն եղած
Պրանտացի բանաստեղծներ որոնցմէ ալէնէն
աւելի աղբուած են մերիւնները, որոնք չեն
կրցած գէթ հաւատարիմ աշակերտներ մը
հանդիսանալ: Նոյն ատեն ոչ ոք կը ժխտէ

թէ լատին բանաստեղծներ, — նշանաւոր քննադատներու ալ հաստատութեամբ, — սիրած են յուզումէն, զգացումէն հանել կեանքի նշանակութիւնը և ձեւը գերազասել նիւթին: Յրանաական բանաստեղծութիւնէն անդին կայ լուրջ բանաստեղծութիւնը. գերման ցեղերու: Հոն պատկերն ու մտածումը որոշ կ'արտայայտուին, անսեթեւեթ, առանց միտութեան, առանց փուշի ու մացառի: Բաց հարթութիւն մը, ակնապարար կանանչութիւն մը, հոն՝ միջնորդող պարզ է ու փայլուն, ճառագայթի մը պէս: Աս ցեղերու քերթողական արտադրութիւններուն հետ մեր գրողներուն at home չըլլալն է պատճառը որ տեղի կուտայ շատ հեղ միակողմանի քննադատութիւններու որոնք անճարակ գովեստներ են ընդհանրապէս:

Ոչ ոք այնքան անմիտ է որ օտարին գեղեցկութիւնները, պատուաստող ոտները մէկզի ձգէ՝ իր չորցած ծառով բաւականանալու անիմաստ գոհարութեամբ: Ու ետքը՝ չկայ մէկը որ չուզէ անաղարտ տոհմային արտադրութիւններու մշակումը մերադնեայ պուէտներու կողմէ: Չկայ զարգացած անհատ մը որ ըթամիտ կոյր յարում մը ցուցնէ օտարին արտադրութեանց, նոյն ատեն՝ ոչինչ, խեղճ ու կրակ բաներ մը սեպելով իրենները: Չկայ պատուաւոր, իր գոյութեան նպատակին, իր կոչումին գիտակից անձ մը որ չի քննէ, չի կարգայ ինչ որ իր հայրերը գրած են, ինչ որ անցեալէն մեզի կտակուած է իբր նուիրական, լաւագոյն բեկորները, մաքուր նշխարները մեր մատենագրութեան: Ասով մէկտեղ, ոչ ոք կր'այ նկատի չառնել այն պահանքը որոնք կը նշմարուին մեր մինչև անգամ վերջին հաւնուած հրատարակութիւններուն մէջ: Յայտնի արժանիքը՝ Յոլթերուն ու Լեուած Քեմբրին՝ մարդ չուրանար: Անոնք կը միացնեն իրենց վրայ չնորհ, թարմ գիւտի գեղեցկութիւն, արուեստ ու բարոյական ուսուցում կը պարունակեն. ու նաև կեանքի առողջ, փորձառական փիլիսոփայութիւնը: Եւ սակայն, քիչեր կրցան գիտել բացակաութիւնը բերեղ, ղուարթ ժպիտի, կեանքը ապրիլու բուռն բաղձանք արթնցնող սողեր:

րու. պակասը՝ մարդերու, բնական տեսարաններու, չէ թէ պարագայական ու հարեւանցի՝ այլ հաստատուն, մեկին, տեւական նկարագիրներ գծող ոտանաւորներու որոնցմէ առատօրէն կը գտնենք մանաւանդ՝ Սնդլիական ու Ամերիկեան բանաստեղծութիւններուն մէջ: Մարդեր միշտ չեն ակորժիւր խրատներէ, դառն ճշմարտութիւններէ, ժպիտ կուզեն անոնք, իրենց վիշտը փոփոկ ու մոռցնող երգ ու աղօթք. և բանաստեղծը ձգելով պահ մը իր «Ես»ը, լրացնել գիտնալու է մարդկութեան պահանջը: Զուարթ գրուածքները չեն որ է՛ն շատը կ'ապրին ու կը կարգացուին:

Չէք բաղձար հիմա որ ա'լ վերջ մը գըտնեն սա՛ անիմաստ, հասարակտեղիք սիրերգներու, հրայրքի, պատրանքի պէս բաները. — գեղեցիկը արուեստի ու մտածումի տեսակէտէն միշտ բացառութիւն կը կալմէ, — ասոնք կը Լքեն մարդը, զանի չեն գօտեպընդեր տոկալու կեանքի ձմեռներուն: Թո՛ղ բանաստեղծը նոր սիրտ մը դնէ անոնց մէջ, կաղզուրիչ մտածում մը:

«Պրական ծիւրախտ»ի ենթակայ պատանի — երիտասարդներու վրայ հակազգեցութիւնը անշուշտ իր օգուտը ունեցաւ, և սովայն, անիկա՝ որչափ մը գրչակներու նոյնչափ մըն ալ մեծերու վրայ ստեպ գործադրուելով իր բարերար արդիւնքը կուենայ: Քննադատութիւնը կը զօրացնէ, պինդ ջիղեր կուտայ գրական աշխատաւորին, մինչ կը ջլատէ մակերեսային միտքը, հարեւանցի խորհողը, — եթէ չէ՛ դրդուած նկատումներէ, եթէ չէ լո՛կ գրական հաշուեյարդարութիւն մը:

Mr. Savage Landor անգլիացի գրագէտը կը պատմէ թէ ինք անգամ մը ըսաւ Wordsworthի. — «Պա՛րոն, մարդ կրնայ բանաստեղծութիւն խառնել արձակին ու իմաստը լուսաւորել, ոգի տալ. բայց՝ երբ արձակ խառնէ բանաստեղծութեան, բոլորովին կ'եղծէ դայն». և կը յարէ թէ բանաստեղծը երբեք չի ներեց իրեն:

Ու կը փորձուիմ խորհիլ թէ շատեր ալ չպիտի ներեն ինծի, եթէ երբեք ժպրհիմ ցուցնել թէ իրենց գրածները բանաստեղծութիւն

ներ չեն,—ինչքան որ կը հասկնանք,—և կամ այնքան բարձր բանաստեղծութիւններ են որոնց խելքերն իս չի հասնիր. չէ՞ մի որ բանաստեղծի հոգի ունենալու է մարդէ՛ բանաստեղծ մը աղէկ հասկնալու համար:

Է՛ն մեծ մարդիկ մանուկներու հասկնալի եղած են: Բան մը չըսելը խորունկ խորհուրդներ յայտնել չէ: Արժանիքի գնահատումը քիչ շատ բանէ հասկցողներէ կը սպասուի ու անոնք բնա՛ւ չեն աղղուիր ոսկեղօծ դրուագաւոր դրասանգներու տեսքէն, խարխուլ, փտտած դուռերու վերեւ փայլուն: Կարծուածէն շատ աւելի դժուար է օտանաւոր գրելը: Տարապալման, անխորհուրդ ինքնավստահութիւնը չէ՛ որ մրցանակը պիտի չա՛նի գրական արշաւի գաշալին մէջ:

ԵՐՈՒԱՆԴ ՄԵՍԻԱԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԹՈՂ ԿԻՆ ՄԸ^(*)

(ՆՈՐԱՎԷՊ)

Յուլիսի այն իրիկունը, չորս բարեկամներ—չորան ալ կիներնին թողած—փափաքը ունեցեր էին մէկտեղ ճաշելու: Սուրճերնին առնելու վրայ էին և մինչդեռ ճաշարանին պարտէղէն վեր կուգար զուարճասէրներու ուրախալիք քրքիչներուն ժխորը, բացուող շամբանայի չիշերուն աղմուկին հետ խառն, բարեհամներէն մէկը ըսաւ, իր կարգին.

—Պատմելիքիս մէջ՝ կնոջ բողբոլին տըղայական ու անձնասէր կողմը կայ: Լիան մի միայն ներկան կը խորհէր, իրեն հետ անցուցած ժամերուս միայն կը մտածէր և այս մը տածումը, իր գաղափարով, իր միակ հաճոյքը կ'ըլլար, հաճոյք մը զոր հեշտանքի փոխարէն պիտի զոհէր: Անօգուտ էր իր մարմինէն ուրիշ բանի վրայ խօսիլ հետը. իրմէ զատ, սիրելէ դուրս բան մը գոյութիւն չու-

նէր: Իր քովը եղած ատենա ալ ուրիշ ո և է բանի վրայ մտածելու չէի. ո՛չ աշխարհ գոյութիւն պէտք էր ունենար, ո՛չ ալ գործ: Վիշտ, ցաւ պիտի չունենայի, քանի որ կը սիրէր զիս և մարմինը կուտար ինծի: Իրեն համար՝ սիրող էրիկ մարդը միայն գոյութիւն ունէր, անկէ դուրս ոչինչ: Ձէ՛ր կրնար հասկընալ այն էրիկ մարդը որ կնոջը համար կ'աշխատի, կը կուռի կեանքին հետ՝ ընկերական դիրքի մը տիրանալու մտօք:

Տանս մէկ շքեղ գեղօրն էր, աղուոր ծաղիկ մը զոր կը հոտոտէի երբեմն: Կինս էր անկողնոյս մէջ, սեղանին վրայ, պտոյտի առնէն, թատրոնը, ընկերութեան մէջ, ուր որ հաճոյք մը կար իրեն համար: Բայց այն բարոյական ոյժը զոր կին մը իր էրկանը կը պարտի, հիմնովին կը պակսէր իր քով: Կին մը կար մէջտեղը, շատ սիրուն և հրապուրիչ սիրունի մը, բայց այսպիսի վերջապէս Լիան, մէկն էր այն հեշտալի կիներէն որոնց համար միմիայն սէրը կայ աշխարհիս վրայ: Ասանկ կնիկներու հետ, խնդալ երգելէն, սիրել և զօսանելէն ուրիշ ճար չիկայ:

Սկիզբները, այս տղայամիտ և ինքնասէր նկարագիրը աչքիս չի դարկաւ և միայն իր ճշուողուն և սոխակի պէս գեղգեղող քնաւորութիւնը ճանչցայ: Յետոյ, զգայնութիւններու աւիւնը և նոր կեանքի մը հեշտութիւնը անգամ մը անցընելէ վերջ, ուգեցի իմ կեանքիս վարժեցնել զինքը, ընկիւններուս վրայ խօսիլ իրեն, իմ գործերովս, զբաղմունքներովս հետաքրքրել զինքը:

—Ինծի ի՞նչ վերաբերութիւն ունին ատոնք, ըսաւ, զիս նեղացնելէն ուրիշ բանի չեն կրնար ծառայել և չեմ կարծեր որ այդ ցաւը տաս ինծի, անանկ չէ՞...

Թեւերուն մէջ անցուց զլուսս և զըգուանքով մը, աւելցուց.

—Քու նեղութիւններդ կը բաւեն քեզի արդէն, ա՛լ հերիք է:

Ճիշդ էր ըսածը. կեանքի բեռը միայն ես պէտք էր որ կրէի: Շուտով հասկցած էի թէ բանի մը օգտակար պիտի չըլլար կինս և իր անձէն, սիրելու հաճոյքէն զատ իմ ըրածնե-

(*) «Une divorcée» — Բարիզեան Գրական Հանդէսէ մը քաղուած, որուն կ'աշխատակցին նորագոյն եւ լաւագոյն գրիչներ:

բէս բնաւ բան մը պիտի չհետաքրքրէր զինքը : Այնքան զուարճալի էր երբոր տղու մը պէս կը փախար :

— Սիրէ՛ զիս :

Դեռ ականջիս մէջն է այս կեղծանոյշ, մեղամաղձոտ և հրապուրիչ ձայնը որ կ'աղերսէր . — « Եկուր , դուռէ զիս » . սակայն , կեանքի մտատանջութիւնները — որովհետեւ էրիկ մարդը ամենօրեայ վատակիրն դժուարութիւնը ունի , մինչդեռ Կինը , հանդարտօրէն նստած է սենեակին մէջ — այնպէս մը այլափոխեցին զիս որ խօսակցութեանս մէջ իսկ յայտ կուգար տարբեր շեշտ մը զոր կ'իւն դուշակեց : Ինքը կուռքն էր , ոչ թէ բարեկամուհի մը , կուռք մը որուն հաւատացեալ մը պաշտամունքի բաւեր պէտք է ուղղէ միայն : Սիրուհի մըն էր և իր գերին կողմ մարդուն հոգերէն միայն իրեն հաճելի ըլլալու տառապանքը կը հասկնար :

Թերեւս իրաւունք ունէր , քանի որ այնքան գեղեցիկ էր և վայելչակազմ :

Իմ սիրանեղութիւններս , մէկ խօսքով մտազբաղումներս դէմ դիմաց եկած էին կընտելան անձնապաշտութեան որ կ'ապրի այն ամէն կնոջ մէջ որ չճանչնաք ճշմարիտ սէրը , այսինքն այն սէրը որ անձնութեանէ և խանդալատանքէ կը բաղկանայ : Էրիկ կնկան կոխները — ամենօրեայ խայթումներ — սկըսան : Ճակտիւս վրայ կնճիւռ մը տեսա՞ւ մի , կոխ . իմ վրայօքս ըսուած խօսք մը կըսէ բերնէս , դարձեալ կոխ . և յաջորդաբար :

Մնաց որ , Լիանի վրայ զգայնոտ և քաշողական հրապույր մը կար որ զիս կը կապէր իրեն , կարճ ժամանակի մը համար : Միւս կողմէ , ես ալ իր վրայ ազդեցութիւն կուսնայի շնորհիւ իմ էրիկ մարդու կորովիս և փորձառութեանս . ասիկա փոխադարձ կապ մըն էր մեզի համար : Իր մայրը , թեթեւամիտ կին մըն ալ անիկա , կ'ըսէր . — « Էրիկը մօրթին մէջ աւեր պահեր է » : Բայց տարուէ տարի , Լիան աւելի ինքնամօլ կ'ըլլար և ազայամիտ այնքան որ կոխները նոր թափով մը վերսկսան և որոշեցինք զատուիլ իրարմէ : Ինկտեմբերի մէջ էինք և Լիան Նիս գնաց : Հոն , ինչպէս որ համաձայնած էինք , նախա-

տական նստակ մը զրկեցի իրեն որով կ'իմացնէի թէ պիտի չ'ընդունիմ ա'լ զինքը տանս մէջ և չորս ամիս վերջ , ձեռք բերած էինք վկաներու կողմէ կարգադրուած և կնքուած այն պաշտօնագիրը որ զիրար ձգելու իրաւունք կուտար մեզի , ինչպէս որ ինքն ալ պահանջած էր երկար ատենէ ի վեր , յամառելով թռչունի մը պէս որ բաց օդին մէջ թռչտելու երազանքէն բռնուած , իր կատուը և ճանկերը զինքը արգելափակող գեղեցիկ թռչնաբանին ապակիներուն կը դարնէ անդադար :

Ատեն մը վերջ , իր մօրը քովէն հեռանալով , մինակը ասլեցաւ :

Կ'երեւայ թէ ամէն բան վերջացած չէր :

Այն ազդեցութիւնը զոր ըրեր էի վրան , տակաւին հզօր էր՝ հակառակ մեր անհատաձայնութիւններուն և մեր բնաւորութեան տարբերութենէն . յառաջ եկած կռիւներուն : Ապրիլի մէջ օր մը փողոցը հանդիպեցանք իրարու և մեր աչքերը , վեց տարի առաջուան հեշտաւէտ օրերուն յիշատակը արթնցուցին :

Եւ , ատեն ատեն , կինս ինծի կուգար , իբր կին :

Այն ժամանակ , տարփուհիս եղաւ անիկա և սիրեցինք զիրար : Դեռ չբաժնուած՝ վերստին տեսնուելու փափաքը նոյն վայրկեանին իսկ կը ծէէր : Աղէկ էր այսպէս : Երբ Լիան կուգար կը գտնէր զիս մեր պլտիկ բոյնին մէջ , դերս ինքնին կը կատարուէր : Միայն կինը կը տեսնէի , իրեն կը մտածէի ոչ թէ հեռանալէս վերջը , այլ ճիշդ այն վայրկեանին որ գէմս կը գտնէի զինքը : Կեա՞քէս բան մը չէի պատմեր իրեն . իբր սիրահար դուռութիւն ունէի լոկ , իմ դերս , միայն սիրոյ երգեր երգելու , իր պաշտելի մարմինին խնկարկումներ ընելուն մէջ կը կայանար :

Ինքն ալ սլատորաստ էր արդէն բոլոր հաճոյքներուն : Դրախաղ վերէն վար կը փոխադրէր : Կին մըն էր նման մօրֆինի որ վայրկեանի մը համար օգտակար կ'ըլլայ՝ իր մարմնակործան դերը կատարելու համար վերջէն : Միտքերնիս ազատ , կուգայինք կը գտնէինք զիրար . ճշմարիտ և անկեղծ սիրոյ հեշտութիւնը կը փախէր կ'երթար մենէ : Մանօն Լէսգօի մը կամ Մարկիթ Կօթիէի մը սէրն ալ չէ՛ր գտնէ ասիկա :

Օրին մէկը խենդ բան մը ըրի. Լինաի ըսի որ կինս ըլլայ նորէն, իբր ամուսին: Երեսո նայեցաւ, շուարած, յանկարծակիի ետկած: Յետոյ, վար ցատկեց անկողնէն, շուտ մը վրան հագաւ և մեկնելէ առաջ, ըսաւ ինծի.

— Դեռ կը մտածեա կոր ատոր:

— Այո՛, Լինաս:

— Ուրեմն, մնաս բարով:

— Ի տեսութիւն ըսէ:

— Չէ՛, մնաս բարով:

Ետեւէն վաղեցի, բայց ուշ էր: Անկէ վերջ, չտեսայ զինքը նորէն: Նամակներս անպատասխան մնացեր էին: Պատկուած կինս նկատուելու երկիւղը, ինծի հետ մէկտեղ կեանքի բեռը տանելու մտածումը, աւելի զօրաւոր էին քան իր մարմնական սէրը. կամ թէ այդ վախը տեղի տուաւ որ իր սէրը իյնայ: Կիններ կան որոնք ամուսին կամ մայր ըլլալու համար ծնած չեն:

Եւ մինակս, տակաւին իր մարմինին բուրմունքներովը անուշ հոտող սենեակին մէջ, յիշեցի իսկոյն թէ գիշեր մը, մեր ամուսնանալէն տարի մը վերջ, մօրը և մէկ քնի բարեկամներու ներկայութեանը, Լիան ըսեր էր.


— Օ՛հ, ես, պէտք չէր որ էրկանս՝ հետ պատկուած ըլլայի. ուրիշի մը կինը ըլլալու էի և ամուսնոյս տարիուհին:

ՖԷԼԻՍԻԵՆ ՇԱՆՍՈՐ

Félicien Champsaur

Քարգմ. ՏՈՒՐԵՆՈ

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ



Նոր գրող մը, Պ. Մ. Պարսամեան, խօսելով արդի գրողներուն վարյ, կրադ մը դիտողութիւններ կ'ընէ իմ մասին ալ, օրաթերթի մը մէջ, կոչելով «անհասկնալի» իմ մէկ բանաստեղծութիւնս՝ հրատարակուած Մաքսի մէջ, թէ և «զարմանալի բան, ժամանակին սիրուն բանաստեղծութիւններ» գրած ըլլամ, իր վերկայութեամբ: Կը զարմանայ, որովհետեւ ժամանակի կարգով յառաջդիմութիւն մը չէ՝ ասիկա, որովհետեւ յառաջդիմութեան օրէնքը

չըջուած կ'ըլլայ այսպէսով, երբ անցեալ մը ներկայէն նախապատիւ է. (պէտք կ'այ խոստովնելու թէ ականարկուած ոտանաւորը ժամանակակից է արդէն այդ միւս «սիրուն»— ինչ քաղաքացիական իդականութիւն բուրող անկան—կոչուածներուն, ինչպէս բոլոր ներկայ հրատարակած ոտանաւորներուն մեծագոյն մասը: Այս խոստովանութեամբ, անշուշտ չա՛տ անմարդկային պիտի ըլլար Լեւել անցեալի գրական պատասխանատուութիւն մը):

Կը հարցնեմ նախ Պ. Պարսամեանին, թէ ինչո՞ւ Մօռիս Պաուէսը մէջ կը բերէ. «մէջ բերել»ու արուեստ մը կ'այ ինչպէս «Վնջել»ու «անյիշատակել»ու արուեստ մը, և Պ. Պարսամեան մէջ կը բերէ՝ մէջ բերելու համար, —ինձմէ՛ նուազ համեստ մը պիտի ըսէր, ցուցամուկութեան՝ զարդի համար միայն: Այդ տարօրինակէս ամօթ աղբող հակասութիւններու, մտաւորական բերաւոր հակընդդէմ հոսանքներու չարաչար նշաւակ հեղինակը որ Նիչէի ձայնատար գործիքը եղած է, ինչ գործ ունի իբրեւ ազդեցութեան տարր մը մեր մէջ, և մանաւանդ, մասնաւորելով, իմ մէջ: Կարելի՞ է յարգել ձայնատար մը որ բնութեան հետ գործ մը չունի անձնագէս, որ կրաւորական ջիղ մըն է ուրիշի մը ձայնին. ամբողջ իր ինքնութիւնը ձայնատար ըլլալու արուեստին մէջ եղած է, ա՛յն՝ Տաշարքացւոց համար ինչ որ է սա՛՝ Վիճէվան՝ Յրանսացւոց համար: Իր աղբուրու չա՛տ մասնաւոր չարչարանքին մէջ փնտռեցէ՛ք իր ինքնութիւնը, իր կարի թելադրական համակերպող երեւակայութեան դառն ապարդիւն ոգեւորութեան մէջ. իր՝ անօգուտ կերպով բեղմնաւոր անդէկ մտաւորականութեան դեւրադրգութեան մէջ որ իր անհաստատ տարակուսամով բաղմամբնուած խառնուածքին ցաւազին արտայայտութիւնը ունի ա՛յնքան անկեղծ, ա՛յնքան ոչ-ամօթիան անվերապահութեամբ մը: Բայց Պ. Պարսամեան արդէն աղէկ չի՛ ճանչնար այդ հեղինակը, երբ «մութ, տարտամ» կը կոչէ զինքը իր գաղափարներուն մէջ. ընդհակառակը, չա՛տ յստակ են իր գաղափարները և իր զգացումները անջա՛տ անջա՛տ, բայց անոնց իրարու հա-

կընդդէմ վիճակն է որ մութ կ'ընեն իր ինքնութիւնը՝ խմաստասիրական ձգտումներու միութեան մեծ գործին մէջ, և կը մասնեն իր չարաչար ազդեցողի բոլոր անկապակից մտայածուններուն դառնութիւնը:

Եւ յետոյ, յայտնի կ'երեւայ թէ Պ. Պարսամեան չա'տ խնամք չի տանիր բառերը միշտ որոյնելու, երբ գեղեցիկն ու աղւորը(*) իրարու քով կը գնէ իրր համիմաստ: Ծոյլ միտք մը միշտ կը սիրէ հոմանիշ բառերը և կը ստեղծէ հոմանիշ բառեր, (երբեմն նաև ինչպէս համիմաստ Նախադասութեանց կրկնութիւններ), վասն զի անգործ միտք մը միշտ իր զգայութիւնները նոյնը կ'ուզէ տեսնել և այսպէս չի՝ գործածել իր ուղեղը չա'տ մասնաւոր, նուրբ, չա'տ այլադան գննութիւններու համար. (կրօնական երգերու մէջ ալ չեն պակսիր հոմանիշ կարծուած բառեր, հոմանիշներ յորինելու ջանք մը, — ինչ որ մտքի և զգայարանքներու րացարձակ ծուլանք մըն է, — չա'տ մը յատկութիւններ չտեսնելու կամ, աւելի գէշ, դանոնք իրարմէ՝ զանազանել չուզելու ակարութեամբ, որովհետեւ զգայարանքները գեւ չա'տ նախնական են հիներուն մէջ, և մասնաւորապէս... Պ. Պարսամեանի մէջ):

Դիտել կուտամ սակայն, թէ Պ. Պարսամեան բաւական խելօքիկ երիտասարդ մը կ'երեւայ ինծի, երբ «անհասկնալի» կոչելով հանդերձ իր անխաբկած ոտանաւորը, սրբադրելու վեհանձնութիւնը և մասնաւոր դասկերցողութիւնը կ'ունենայ «հետք» բառը որ տըպագրական վրիպակ մըն էր արդէն փոխանակ «հերք»ի: Կը հետեւցնենք թէ Պ. Պարսամեան արդէն բաւական հասկցած և կուահած ըլլալու է ուրեմն

«Դեւ լուսինն անհառիմ հերք

Համբուրիլէ չզաղորած»

բացատրութիւնը: Եթէ ուրիշ վրիպակներ ալ

(*) Ժողովուրդը կը գործածէ «աղւոր»ը չա'տ ընդհանուր խմաստով, իրրեւ յաջող, հաճելի, հեշտալի, գեղուտ, համակրական, ևն. մինչ «գեղեցիկ»ը չա'տ մասնաւոր սպասւորութիւն մը ունի իր մէջ: Ե. Գ.

ըլլային զորս ուղղէր ինքը, չպիտի հետեւցուէր թէ արդէն բաւական կը հասկնար ոտանաւորը: Հետեւութիւնը դարձեալ նոյնը պիտի ըլլար ամբողջին համար, եթէ իրօք պարտը բաւական նուրբ մտաւորական խառնուածք մը ունենար, և մասնաւոր կոչում ընէր իր զգայարաններուն կատարեալ դարգացումին կամեցողութեանը: Չա'սկնար «ուղեղի գոյն»ը որով կը բացատրուէ լուսնոտ գիշեր մը: Ասիկա չա'տ անձնական է, կ'ընդունի'մ, բայց ատիկա չա'տ իրական զգայութիւն մըն է. «մտածումի գոյն» ասութիւնը բաւական հին է արդէն, ընդունելով զայն թէ՛ իր նիւթական-զգայական և թէ՛ իր բարոյական—մտաւորական առումով: Յետոյ կը հարցնէ թէ «Ո'վ սիրոյս ուղի, դուն հեւացիք՝ արծաթե» բացատրութիւնը ինչ օրէնքի վրայ հաստատուած է: Անշուշտ ո՛չ Պարսամեանի զգայարանութեան օրէնքին վրայ: Անա՛ նիւթը.—լուսնոտ գիշեր մը, խորհրդաւոր կերպով երանգուած. կը մտածեմ սիրոյս վրայ, այն սիրոյն վրայ որով անհասը կը նուիրուի Տիեզերքին խորհուրդին, անծանօթ անհուն Առաքյալական: Ենթակայականութիւնն, հոս, տխուր է, վասն զի չի՝ գիտեր թէ ինչ է այդ խորհուրդը որ զինքը կը շրջապատէ և որուն կը սիրէ յանձնել ինքզինքը: Իր սիրոյն, իր Անձնութեամբ ուղին, լուսնոտ գիշերուան տխրութեան հետ ա'յնքան ի ճահ եկած, նոյն ինքն այդ գիշերն է որ արծաթէ երանգներով կը հեւայ:

Բոլոր այս բացատրութիւնները աւելորդ պիտի նկատէի, Պ. Պարսամեան, ձեր հասկերցողութեան համար, եթէ իրականութեան սերը մասնաւոր քրուեստագիտական բարձր տառապանք մը եղած ըլլար ձեր զգայարանքներուն մէջ և եթէ դատէիք բանաստեղծութիւնը այդ իրականութեան սիրոյն ամէնէն բարձր կենսազօր արտայայտութիւնը:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Լեոն Ժ. Պապին լսեցեքե՛ն Տաղին գրաբար բարգմանութիւնը ինչպէս նաեւ Մ. Ուղուրեանի բանաստեղծութիւնը.—որոնք նշանակուած են «Մասիս»ի բովանդակութեան մէջ, — յաջորդ քիւն յետագայ պատճառութեամբ միւս նիւթերուն ընդարձակութեանը պատճառաւ:

ԽՄԵԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

Երուսաղեմի Միաբանութեան ծանօթ խնդիրները, նախորդ շաբթու խառն ժողովին ուշադրութեան առարկայ դառնալէ ետքը՝ որ կարգ մը որոշումներ տուաւ անոնց մասին, շաբթուս մէջ ալ բաւական զբաղեցուցին մեր օրաթերթերը։ Արեւելի՛ իր «Պատրիարքարանի Լուրեր»-ու բաժնին մէջ ամփոփուած տեղեկութիւններով և Բիւզանդիոն ու Մանգուսի «Երուսաղեմասէր» ու «Դիտող» ստորագրութեամբ յօդուածներով շեշտեցին Վարչութեան որոշմանց իսկութիւնն ու լուսաբանեցին անոնց ոգին զորս այլապէս ցոյց առաւ փորձող հրատարակութիւններ ալ պակաս չեղան, ինչպէս կը սպասուէր։ Այս վերջիններուն հեղինակները որոնք տարիներէ ի վեր արատաւորել կ'ուզէին Ղեւոնդ վարդապետի նման արժանաւոր ու վարչագէտ եկեղեցական մը, Երուսաղեմի հաշուական խնդիրը Վարչութեան սեղանին վրայ դրուելու առիթէն օգտուելով՝ ամբաստանուածի երեւոյթ մը վերադրել ուղեցին Երեւմտից Գեր. Տեսչին, պերճախօս տողերով ու ճարտար ձեւերով. մինչդեռ, Կ. Պոլիս հրաւիրուած են զանգատող խումբէն երեք վարդապետներ որպէսզի իրենց առարկութիւնները հաստատեն Պատրիարքարանի առջև. միեւնոյն ժամանակ, Վարչութիւնը փափագ յայտնած է որ Միաբանական Տնօրէն Խորհուրդին կողմէ ալ ներկայացուցիչ մը դառնալի այստեղ, հարկ եղած լուսաբանութիւնները տալու համար, և այս ներկայացուցիչը լաւագոյն է՝ ի հարկէ՝ որ նոյն Խորհուրդին ատենապետը ըլլայ, եթէ առ այս արդելք մը չտեսնէ և հաւանի Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը։

Այս է ահա՛ Երուսաղեմ ուղղուած Պատրիարքական պաշտօնագրին իմաստը, որ կը ներկայացնէ Վարչական որոշումը։ Կը յուսանք և կը փափագինք որ Երուսաղեմի Ս. Պատրիարքը չի զլանայ իր հաւանութիւնը և Երեւմտից Գեր. Տեսուչը Կ. Պոլիս դայ՝ անձամբ հերքելու այն յերիւրանքները զորս իր

հակառակորդները կը տեղացնեն իր գլխուն, Հանրային կեանքի մէջ առաջին անգամը չէ որ կը տեսնուի այս տեսակ երեւոյթ մը և վերջինն ալ չպիտի ըլլայ։ Տ. Ղեւոնդ վարդապետ կարգի կանոնի բերաւ Երուսաղեմի խանգարուած մատակարարութիւնը, եկամուտները բազմացուց, վանքին դրամական վարկը բարձրացուց. և զարմանալի չէ որ իրեն հակառակորդներ ու նախանձորդներ ըստեղծէր որոնք, — ինչպէս չա՛տ ձիչդ զիտել կուտայ Արեւելի, — կ'ուզէին կոտորել այդ վարկը և հեռացնել կարող ու ձեռնհաս աշխատաւորները՝ գերադիւր գեր մը ստանձնելու համար մատակարարական գործին մէջ։

Երուսաղեմի հաշուական խնդիրը լրագրական թեր ու դէմ վիճաբանութիւններով չէ որ պիտի լուծուի, և մենք ալ՝ ինչպէս մեր պաշտօնակիցներուն մեծագոյն մասը՝ վստահաբար կը սպասենք Վարչութեան կատարելիք անաչառ քննութեան ելքին։

Ռուսահայոց եկեղեցապատկան կալուածներու գրաւման առթիւ նախորդ շաբթու Ազգ. Պատրիարքարանի մէջ գումարուած Եպիսկոպոսական ժողովին կողմէ որոշուած դրաբար պաշտօնագիրը, զոր խմբագրած էր Ս. Պատրիարք Հայրը, Եպիսկոպոսական դասին կողմէ ստորագրուելով՝ զրկուեցաւ իջմիտման, Ս. Հայրապետին։ Սոյն պաշտօնագրին մէջ մասնաւորապէս շեշտուած է՝ սա պարագան թէ Պալատէնիոյ մէկ քանի յօդուածներն ալ որոշակի նուիրադրած են Հայոց Եկեղեցւոյն Ռուսիոյ մէջ կալուածներ ստանալու և մատակարարելու իրաւունքը, և Ռուս կառավարութեան կողմէ հաստատուած նոյն կանոնագրին մէջ յայտարարուած է արդէն թէ այդ ամէն կալուածները մասնաւոր եկեղեցւոյ մը սեփականութիւնը չեն, այլ բովանդակ Հայ Եկեղեցւոյն։ Այսքան բացայայտ իրաւունքի մը կապտումը բնական է որ անտարբեր չի կրնար թողուլ նաեւ Թուրքիոյ Հայ Եկեղեցականութիւնը։ Սոյն դրաբար պաշտօնագրին խմբագրութիւնը մեծապէս զնահատուած է Եպիսկոպոսներէն։

ԱՐՏՈՏԱՏԵՐ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐՏԻՆԻՔ Օրագրի

ՎԻՇՆՆԱԿԱՆ ՄԵԽԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԲԱՆԿԱԼԻԻ

4779 ՏԱՐԵՇՐՁԱՆ

Վարժարանս հաստատուած է 1857ին. նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական, բարոյական եւ գիտական կրթութիւն մը: Վարժարանի վարչութիւնը՝ Վիէննայի Մխիթարեանց ձեռքն է: Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Միաբաններէ եւ վկայեալ արտաքին ուսուցիչներէ, պիտի կազմեն այս տարի 24 հոգի: Ուսմանց ծրագիրն է՝ արդի եւ կրօնական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջագիրը, որ կը համապատասխանէ գերմանական/րեալական դպրոցին (Realschule) յառաջագրին: Բայց ըստ կարի յարմարեալ է՝ այս ծրագիրը միջավայրի պիտոյից: Վարժարանիս կատարեալ ընթացքն աւարտող աշակերտները կրնան շատ դիւրութեամբ եւ առանց ցնցուիլ տալ իրենց ուսման ծրագրին վարժարանն յաճախել՝ ուսմանը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ ի Վիէննա, Զուիցերիա եւն.) եւ կամ՝ կրնան վաճառականութեան ձեռնամուրրիլ: Աւանդուած լեզուներն են՝ Հայ. Տէկ. Դաղղ. Գերմ. եւ Անգլ. (վերջին 2 տարիները): Դաղղերէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորուել են միշտ նոյն լեզուն խօսելու, եւ իրենց վրայ պիտի հսկեն զաղդիացի Մարիպոնէ, զորոնք յաշկապէս բերել տուաւ վարչութիւնն Բարիզէն: Այս տարի 5 պիտի ըլլայ ասոնց թիւը: Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամսացուցակ մը, որուն մէջ մանրամասն կը նշանակուի աշակերտին բարոյական եւ ուսուցչական վիճակը, իւրաքանչիւր դասի մէջ առած նիշերը եւն.: Վարժարանս կը գտնուի ընդարձակ ծառայից պարտէզի մը մէջ. ունի իր յատուկ բժշկին ու դեղարանը: 1903 1904 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 1/14 Բ. օրը: Դպրոցամուտի ընունքիւնները իտի կատարուին Օգոստոսի 29ին եւ 30ին, իսկ դասերը կը սկսին՝ կանոնաւորապէս՝ Երկուշ. օրը՝ Սեպտ. 2ին: Հրատարակուած է վարժարանիս 5րդ տեղեկագիրը: Վարժարանիս նկատմամբ ընդարձակագոյն տեղեկութիւններ ուզողը, թող դիմէ վարժարանի վարչութեան:

Թոշակ տարեկան ամենայն ծախիւք

գիւղերիկներու համար 30 օսմ. ոսկի

» տարեկան ամենայն ծախիւք
ցիւղերիկներու համար 20 օսմ. ոսկի

» տարեկան ամենայն ծախիւք
արտաքիններու համար 10 օսմ. ոսկի

Վարիչ

Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ՄԷՆԷՎԻՉԻԱՆ

Կ. Պոլիս, Բանկայի

P. GABRIELE Dr. MNEVICHIAN
Constantinople, Pancaldi

ՄԵԽԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԳԱՏՆՈՒԹՅՈՒՆ

Դասը դիւրի Մխիթարեան վարժարանը պիտի բացուի Սեպտ. 2ին (ըստ Ն. Տ. Բ.): Դպրոցին դիրքը հիւանալի է, ծովահայեաց, օդաւէտ. դասարանները լուսաւոր են եւ ընդարձակ ըստ բաւականի: Խստիւ կը հսկուի տղայաց բարոյականի, կրթութեան ու առողջութեան վրայ: Կ'ուսուցուին Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, Անգլիերէն ու Իտալերէն լեզուները, իմաստասիրութիւն, Բնաբանութիւն (Physique), Բնալուծութիւն (Chimie), Հաշուակալութիւն (Comptabilité), Երկրաչափութիւն, Դրահաշիւ, Թուարանութիւն, Բնական Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Մատենագրութիւն, Եւայրն. Գծագրութիւն, Գեղագրութիւն, Մարմնամարզութիւն, Զայնական եւ Դործիական երաժշտութիւն:

Վարժարանին աշակերտներէն անոնք որ քաջ ու ընտիր կը հանդիսանան ուսմանց ու բարի վարքի մէջ, կ'անցնին յետոյ Վենետիկի Մուրատ-Ռափայելեան վարժարանը, եւ ի՞նչ է հոն ալ քաջ հանդիսանալով ուսմանց ու բարի վարքի մէջ՝ արժանաւոր դասուիւն, կրնան յաճախել քաղաքին Ակադեմիան ու բարձրագոյն վարժարանները եւ կամ կը զրկուին իտալիոյ եւ ուրիշ երկիրներու համալսարանները:

Վարժարանին տարեթոյական է 25 օսմ. ոսկի. կարօտ ընտանիքներու համար միայն, զիջողութիւն ընելով, 15 օսման. ոսկի. անկէ նուազ թոշակով աշակերտներ չեն ընդունուիր:

Աւելի մանրամասնութեանց փափաքողք կրնան դիմել ուղղակի Մատայի (Դատըգիւղ) Մխիթարեան վարժարանի Տեսչութեան:

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՐՈՍ

ԾԱՆՈԹ.— Զրիններուն թիւը արդէն իսկ լեցած ըլլալով, այս տարի այլ եւս ձրի աշակերտ չպիտի ընդունուի ըստ վարժարանին չէնքս ալ նորոգուած եւ աւելի ընդարձակուած է այս տարի:

ԲՐՈՑ. Յ. Յ. ՄԱՆԻՍԱՃԵԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

59 ՊԱՏԿԵՐ ԵՒ 12 ԲԱՐՏԷՍ

Անտիօլիա Գօլէճի Բնական Գիտութեանց ուսուցիչ Բրոք. Յ. Յ. Մանիսաճեանի աշխատանքները այս ընդարձակ դասագիրքը Աշխարհագրութեան ճիշդին ամենէն ճոխ եւ զեղեցիկ գործ մ'է որ պատրաստուած է մեր վարժարանաց միջին եւ բարձրագոյն դասարաններու գործածութեան համար : 200ի մօտ մեծադիր երեսներէ բաղկացեալ սոյն դասագիրքը կը պարունակէ 59 մեծ ու փոքր պատկերներ եւ 12 քարտէսներ որք մասնաւորապէս պատրաստուած են ըստ վերջին աշխարհագրական փոփոխութեանց :

Մասնաւոր խնամք եւ ընդարձակութիւն տրուած է Թուրքիոյ աշխարհագրութեան, ինչ որ այս հրատարակութեան ամենէն գերադանց մասերէն մէկն է : Ոչ նուազ կարեւոր են նաեւ գործին վերջն ուղղուած չափ մը վիճակադրական եւ այլ ցուցակներ, որ անհրաժեշտ են մասնաւորապէս լրագիր կարգադրներու համար :

Կեդրոնաւեցի՝ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատնը

Թիւ 27, Ֆինճաճըյար եօզուլու, Կ. Պոլիս

Եւ հեղինակին քով ի Մարզուան

Բնիկ-Եւ զօրաւոր լաքակալմ

Գին 14 դր.

ԱՓՕՍԹՈՂԻՔ ԻՆՍՏԻԹՒԹԻՒԹ Ի ԳՈՆԵԱ

(ՃԷՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ Թուրքիոյ մէջ գտնուող Ամերիկեան միւս գոլէճներուն յար եւ նման ծրագրով մը՝ Հայ. Օսմ. Անգլ., Ֆրանս., եւ Յուն. (Յունաց համար) լեզուներ, նաեւ ընական, բնագատմական, ուսողական, փիլիսոփայական եւն. գիտութիւններ. իսկ իրեն արուեստ կ'ուսուցանէ կահագործութիւն, լուսանկարչութիւն եւ ջութակահարութիւն : Բաց աստի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատէ 3 տարուան ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ մը ուր մասնաւոր խնամքով պիտի դասախօսուին գործնականապէս առեւտրական աշխարհ., թուաբ., տոմարակալութ. օրէնս գիտութիւն, վաճառականական եւ սեղանաւորական գործողութիւններ, պաշտօնական եւ ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ՝ Հայ., Օսմ., եւ ֆրանսերէն լեզուներով եւն. եւն. եւ սոյն ճիւղին աշակերտները ստիպեալ չպիտի ըլլան գոլէճական միւս դասերուն հետեւելու : Տարակոյս չիկայ թէ այս նորութիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարակութեան, Գիշերօթիկներու դպրոցական տարեթոշակն է միայն 10 օսմ. ոսկի. նոր տարեշրջանը պիտի սկսի սեպտ. 11/24ին : Աւելի մանրամասն տեղեկութեանց համար գիմնաւ. Տնօրէնն Վեր. Տըշ Ա. Յ. Հայկազեան ի Գոնեա :

4-6

Կ. Յ. ՏԵԹԵՐՄԵՆՃԵԱՆ

ՅԱՆԶՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից, սպագրական գործերու պատրաստութեան հոգը :

ԳԻՆ ԴԻԻՐԱՄՍՏՉԵԼԻ

Մախուր եւ արագ գործօնեւթիւն :

Արժէք կանխիկ. 5%ի զեղչ :

Ծանօթ վաճառականաց, ապառիկ :

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն մասամբ :

Մանրամասնութեանց համար գիմն

Կ. Յ. ՏԵԹԵՐՄԵՆՃԵԱՆ

ՍԱՄՍՈՆ


ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՔԱՐԱՎՈՐԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածոնթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ բաքիարուի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր քաղմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

9—30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժդոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ստի ու ստի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գէտէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՇԱՔԱՐԱՎՈՐԾ ԲԵՐԱՅԻ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱՆԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻՒՏԱՐ

Զարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱՆԱԼ ՆԱԽԱԳԻՆ ՀԵՆՆԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԹՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. բնոգեմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՃԷՆ)

ԱԼԼԷԱՆՑԱ

Շուկային ապահովագր. ԸՆԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամաստունն է ի Կ. Պոլիս, Գոթի Լիօնի

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

Ն ՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան դեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳԱՂԻՅԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

Գ. ՆԱՐ-ՊԷՅԻ

Դիւն երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնատեղին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Դաւաթիա Սեղբոս խան Թիւ 5

4-10

ՀԱՅՈՒՇԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱՐԱԶԱՐ

Վարժարանին նոր տարեշրջանը պիտի
սկսի Սեպտ. 9ին. (Ն. Տ.), Չորեքշաբթի,
Դիւնբոթիկներու տարեթուական է 12 օսմ.
ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. 1
սկիզբը. միւս կէսը Յունուարի մէջ. Դաւ-
նակի դաս առնողները 3, իսկ երգեհոնի դաս
առնողները 1½ ոսկի աւելի կը վճարեն:

Կէս տոմակով Ատաբազար ուղեւորելու
եւ ուրիշ զիւրութեանց համար՝ կարելոր է
որ վարժարանին գիշերօթիկ աշակերտուհի-
ները ինչպէս նաեւ յառաջիկայ տարեշրջանին
նոյն վարժարանին աշակերտիլ՝ փափաքող
օրիորդները, իրենց անունները շրջեն՝ եւ
կամ անձամբ կամ իրենց պաշտպանին միջո-
ցաւ ներկայանան Մր. Ու. Ու. Փիթի, Թիւ

5, Ամերիկեան խան Կ. Պոլիս մինչեւ Սեպտ.
4, (Ն. Տ.):

Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն
ձրի կը շրջուի: Ուրիշ տեղեկութեանց հա-
մար գրել Տօքթ. Ս. էֆ. Գավալճեանի,
Ատենապետ խնամակալութեան, Ատաբազար:

ՌՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15, Կարգադրութիւն-
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար: Մնայուն
բժիշկ լը՝ աշակերտներու առողջութեան,
մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա-
հական վիճակին վրայ կը հսկէ: Նախորդ
տարու ընէ սկսեալ՝ բացուած է նաեւ փոքր
տղոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

4-12

ԼԵԻՈՆ Թ. ԹԷՐԶԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վկայեալ Բարիգու Բժշկական վարժարանէն
Նախկին chef de clinique Ֆրանսայի
Ատամնարուժական Վարժարանին, Կ'ընդունի
ամէն օր իր բնակարանը՝ Բերա, Մեծ-փողոց
Թ. 407 (Նանիի գարնջրատան դէմ):

4-10